1945թ. «ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ ԵՐՐՈՐԴ ԼԵՅԲՈՐԻՍՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երկրորդ համաշխարհային պատերազմը մեծ վնաս հասցրեց Անգլիայի տնտեսությանը: Արտադրության անկումը կազմեց 10%: Պետական պարտքը, որը 1939թ.կազմում էր 7,2 մլրդ. ֆունտ ստերլինգ, 1949թ. հասավ մինչև 23,7 մլրդ. ֆունտ ստերլինգ, որից 3.5մլրդ ֆունտ ստերլինգը կազմում էր արտաքին պարտքը: Իր արտասահմանյան ներդրումներից միայն 1 մլրդ ֆ. ս. Անգլիան ստիպված եղավ փոխանցել ԱՄՆ-ին ռազմական մատակարարումների դիմաց: Մեծ կորուստներ ունեցավ անգլիական առևտրական նավատորմը: Վատացան հարաբերությունները գաղութների հետ: Բրիտանական դոմինիոնները, որոնք Անգլիայի հետ միասին պատերազմում էին Գերմանիայի դեմ, ձգտում էին ստանալ տնտեսական և քաղաքական լրիվ անկախության: Գաղութներում գնալով ընդլայնվում էր ազգային ազատագրական շարժումը: Ընդհանուր առմամբ պատերազմի ընթացքում Անգլիան կորցրեց իր ազգային հարստության շուրջ 25 %: Սակայն բոլոր արևմտաեվրոպական երկրներից Անգլիան, այնուամենայնիվ, ամենևին վատ դրության մեջ չէր գտնվում: Մարդկային կորուստները համարյա չորս անգամ ավելի քիչ էին, քան I Համաշխարհային պատերազմի տարիներին՝ 245 000 զոհված, 278000 վիրավոր և 53000 անհայտ կորածներ: Իսկ ավերածությունները գերմանական ռմբակոծություններից իրենց մասշտաբներով անհամեմատելի քիչ էին, քան մայրցամաքում: Անգլիայի հաղթանակի մեջ շատ կարևոր և մեծ դեր խաղաց կոալիցիոն կառավարությունը պահպանողական Ու. Չերչիլի ղեկավարությամբ: Այդ պատճառով շատ անսպասելի էին 1945թ. հուլիսի 5-ին տեղի ունեցած պառլամենտական ընտրությունները, որոնց արդյունքում հաղթանակ տարան լեյբորիստները: Չերչիլի ձգտումը՝ անցկացնել պառլամենտական ընտրություններ մինչև համաշխարհային պատերազմի ավարտը, բացատրվում էր մի քանի պատճառներով: Իշխանությունը գտնվում էր պառլամենտի ձեռքերում, որը ընտրվել էր դեռ 1935թ., և նրա լիազորությունները երկարացվում էին պատերազմի պատճառով: Սակայն հիմա, երբ Եվրոպայում պատերազմը ավարտվել էր, ընտրությունները հետաձգելու համար արդեն պատճառ չկար: Ինքը՝ կառավարությունը, կոալիցիոն էր, «ազգային»: Չերչիլը, վայելելով ժողովրդա-

կանություն և իր ձեռքերում կենտրոնացնելով իշխանությունը, այնուամենայնիվ նրա ղեկավարության տակ պահպանողականները երբեք ընտրություններին չէին մասնակցել և չէին հաղթել, իսկ պահպանողական կուսակցության առաջնորդը նա դարձավ արդեն այն բանից հետո, երբ գլխավորեց կառավարությունը: Բացի այդ, Չերչիլը ձգտում էր ընտրություններ անցկացնել «հաղթանակի ալիքի» վրա՝ օգտագործելով բարենպաստ հոգեբանական կլիման:

1945թ. մայիսի 23-ին Չերչիլը հայտարարեց իր պաշտոնաթողության մասին և խնդրեց թագավորին ցրել համայնքների պալատը: Պահպանողականների նախընտրական կամպանիայի մեջ կենտրոնական տեղը զբաղացնում էր Չերչիլի փառաբանումը: Միևնույն ժամանակ Չերչիլի ելույթներում մեծ տեղ էին զբաղացնում հակալեյբորիստական և հակասովետական հարձակումները: Օրինակ՝ ելույթներից մեկում նա ուղակի հայտարարեց, որ «ոչ մի սոցիալիստական համակարգ չի կարող ստեղծվել առանց քաղաքական ոստիկանության»: Եթե լեյբորիստները հաղթեն, Անգլիայում կլինի գեստապո: Իսկ լեյբորիստների ծրագիրը տարբերվում էր իր քաղաքական արմատականությամբ: Նրանք իրենց ներկայացնում էին որպես «սոցիալիստական կուսակցություն», որի վերջնական նպատակն է «Մեծ Բրիտանիայի սոցիալիստական ընկերակցությունը»: Լեյբորիստները կողմնակից էին «խառը տնտեսությանը», կարևորագույն արդյունաբերական արտադրությունների ազգայնացմանը, ինչպես նաև ակտիվ սոցիալական քաղաքականության անցկացմանը:

Ընտրությունների արդյունքը շշմեցուցիչ էր. լեյբորիստները ոչ միայն հաղթեցին, այլ նաև առաջին անգամ համայնքների պալատում ստացան բացարձակ մեծամասնություն՝ 393 տեղ, պահպանողականների 213 տեղերի դիմաց:

Լեյբորիստների առաջնորդ Կլեմենտ Էթլին գլխավորեց երրորդ լեյբորիստական կառավարությունը: Էթլիին հաջողվեց կառավարությունում ընդգրկել փորձառու և պրոֆեսիոնալ քաղաքական գործիչներին: Վարչապետը իր դերը տեսնում էր ոչ թե ղեկավարության մեջ, այլ ավելի շատ կառավարության գործունեության կոորդինացման մեջ: Իզուր չէ, որ նոր վարչապետը սիրում էր ասել «Եթե ծեր մոտ կա լավ շուն, ինքներդ մի հաչեք»: Կառավարությունը սկսում է կյանքի կոչել նախընտրական ծրագիրը: Այսպես, 1946թ. փետրվարին ազգայնացվեց Անգլիական բանկը: 1946թ.-ից մինչև 1948թ. ազգայնացվեցին երկաթուղային ճանապարհները, քաղաքացիական ավիացիան, տրանսպորտը, կաբելային և հեռագրային կապը, ինչպես նաև էլեկտրատեխնիկական և ածխահանության արդյունաբերությունները: Արդյունքում պետական սեկտորում կենտրոնացվեց արդյունաբերության 20%: Դրա հետ մեկտեղ կառավարությու-

ը բազմիցս կրկնում էր, որ մտադրություններ չունի «տոտալ ազգայնացման» քաղաքականություն անցկացնել: Սեփականության ձևը որոշելու չափանիշը պետք է լինի առաջին հերթին տնտեսական արդյունավետության սկզբունքը: Մեծ ակտիվություն լեյբորիստական կառավարությունը ցուցաբերեց սոցիալական քաղաքականության բնագավառում: Վերականգնվեց արհմիությունների գործադուլ անցկացնելու իրավունքը: Ընդունվեցին օրենքներ, որոնք երաշխավորում էին ամբողջ բնակչությանը թոշակների (տղամարդիկ 65 տարեկանից, կանայք՝ 60 տարեկանից) և գործազրկության նպաստների ստացումը: Նյութական օգնություն պետք է տրվեր նաև մահվան, հիվանդության կամ հղիության դեպքում: Բարեփոխման արդյունքում պետության ծախսերը սոցիալական ապահովագրության բնագավառում ավելացան 2,5 անգամ: Մտցվեց նաև անվճար բժշկական օգնություն բնակչությանը: Կարճ ժամանակվա ընթացքում կառուցվեցին ավելի քան 1 մլն. մունիցիպալ շենքեր, որտեղ պետությունը հսկողության տակ էր վերցրել վարձը, որը չպիտի անցներ պատերազմական տարիներին հաստատված չափը:

Լեյբորիստական կառավարության գործունեությունը թույլ տվեց արդեն 1948թ. հասնել տնտեսական զարգացման նախապատերազմական մակարդակին և կայունացնել սոցիալական վիճակը: Արդյունաբերական արտադրության աճը կազմում էր տարեկան 6%: Սակայն կտրուկ անցումը լայն պետական կարգավորմանը բարդացրեց մասնավոր ձեռնարկատիրական գործունեությունը և բերեց մասնավոր ներդրումների կրճատմանը: Գնալով կառավարությունը դժվարությունների է հանդիպում իր ծրագրերի ֆինանսավորման հարցերում: Առևտրական բալանսի պասիվությունը և կախվածությունը ներմուծումից, ռազմական պարտքերի դիմաց վճարումները արագ կերպով բերում էին երկրի արժութային պաշարների կրճատմանը: Տեղի էր ունենում ֆունտ ստերլինգի արժեզրկում, ինչը իր հերթին բացասական էր ազդում ինվեստիցիոն շուկայի վրա: Այս պայմաններում կառավարությունը ստիպված եղավ փոխառություն վերցնել ԱՄՆ-ից՝ միևնույն ժամանակ իր վրա վերցնելով ֆունտ ստերլինգի՝ դոլարի վրա ազատ փոխանակում մտցնելու պարտավորությունը: Դա տեղի ունեցավ 1945թ. սակայն արդեն 1946թ. ԱՄՆ-ում գները բացթողնվեցին, ինչը բերեց արտահանվող ապրանքների կտրուկ թանգացմանը: Այդ պատճառով Անգլիան, որը ներմուծվող ապրանքների մեծ մասը ստանում էր ԱՄՆ-ից, մեկ տարվա ընթացքում ծախսեց ԱՄՆ-ից վերցրած փոխառությունը: Երկրում սկսվեց սուր ֆինանսական ճգնաժամ: Լեյբորիստական կառավարությունը ստիպված եղավ 1949թ. սեպտեմբերին անցկացնել ֆունտ ստերլինգի դեվալվացիա 30,5%: Ֆունտի արժեքը իջավ 4,03-ից մինչև 2,8 դոլարի: 1950թ

կառավարությունը նույնիսկ ստիպված եղավ հրաժարվել Մարշալի ծրագրին հետագա մասնակցությունից (այդ ծրագրի շրջանակներում Մեծ Բրիտանիան ստացավ 2,3 մլրդ դոլար), որովհետև ամերիկյան օգնությունը ստանալու համար պարտադիր պայմանն էր՝ արժութա-ֆինանսական գործունեության բացարձակ ազատությունը ներքին շուկայում, իսկ դա սպառնում էր անգլիական տնտեսության կայունությանը: Իհարկե, ֆունտ ստերլինգի անկումը չի կարելի համարել որպես միայն կառավարության սխալների հետևանք, սակայն ֆինանսական ճգնաժամը կտրուկ բարդացրեց երկրի տնտեսության դրությունը: Լեյբորիստական կառավարության հեղինակությունն ընկնում էր:

Էթլին և նրա կառավարությունը, ինչպես նաև պահպանողականները, կողմնակից էին «ատլանտյան համագործակցության» քաղաքականությանը: Եվրոպայի վրա սկսում է իջնել «երկաթյա վարագույրը»: Այդ քաղաքականության սկիզբը դնում է Ու. Չերչիլը իր հայտնի ճառով, որը նա արտասանում է 1946թ. մարտի 5-ին ամերիկյան Ֆուլթոն քաղաքի Վեսթմինստերյան կոլեջում 30000 մարդկանց ներկայությամբ: Այդ ելույթի առիթը դարձավ Իրանում ստեղծված քաղաքական ճգնաժամը: Համաձայն 1942թ. կնքված պայմանագրի, խորհրդային զորքերը իրավունք ունեին Իրանի տարածքում պատերազմից հետո մնալ ևս վեց ամիս: Ժամկետը լրանում էր 1946թ. մարտի 2-ին:Սակայն ԽՍՀՄ-ը հայտարարեց, որ դուրս կբերի իր զորքերը Իրանից, բացի իրանական Ադրբեջանի տարածքից: Արևմտյան երկրները գնահատեցին ԽՍՀՄ-ի այդ քայլը որպես ադրբեջանական անջատողական ուժերին ռազմական օգնության և Իրանի տարածքի մի մասում ԽՍՀՄ-ին կողմ վարչակարգ ստեղծելու փորձ: Ըստ Չերչիլի, նոր աշխարհի կարգավիճակի հիմքը պետք է դառնա «ամերիկյան դեմոկրատիան»: Ամերիկյան դեմոկրատիայի տակ Չերչիլը նկատի ուներ Արևմուտքի ընդհանուր մշակութային և բարոյական արժեքները: Նրա կարծիքով ամբողջ քրիստոնեական քաղաքակրթությունը վտանգի մեջ էր և ամբողջ աշխարհին սպառնում էր բռնակալության հաստատման վտանգը: Եվ այդ սպառնալիքը գալիս էր ԽՍՀՄ-ից, խորհրդային կոմունիզմից: Չերչիլը կոչ էր անում բոլոր դեմոկրատական երկրներին, որպեսզի նրանք միասնական ուժերով պաշտպանեն իրենց ազատությունը: Փաստորեն, խոսքը գնում էր ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի միջև ռազմա-ստրատեգիական դաշինքի ստեղծման մասին, որը «երկաթյա վարագույր» կիջեցներ կոմունիստական սպառնալիքի առջև: «Երկաթյա վարագույր» տերմինը Չերչիլը առաջին անգամ օգտագործեց պառլամենտում 1945թ. օգոստոսի 16-ին իր ելույթի ժամանակ: Ֆուլթոնյան ճառից հետո այդ հասկացությունը դառնում է «սառը պատերազմի» խորհրդանիշը: Չերչիլի ելույթը նաև նոր աշխարհահայացքային փիլիսոփայության

արտահայտումն էր, որը գնալով մեծ տարածում ունեցավ ամբողջ Արևմուտքում: Դրա հիմքում ընկած էր աշխարհի նոր բաժանումը երկու հակադիր համակարգերի, որոնք պատրաստ էին բախվելու իրար հետ: Եվ, որպեսզի խուսափել «տաք» պատերազմից, պետք էր անմիջապես մեկուսացնել հակառակորդին՝ սկսելով «սառը պատերազմ»: Արևմտյան երկրների համար դա նշանակում էր ԱՄՆ-ի ռազմա-քաղաքական գերիշխանության ճանաչում: Անգլիայի համար «հատուկ հարաբերությունները» ԱՄՆ-ի հետ, ինչպես նաև նվիրվածությունը ատլանտյան համերաշխությանը, դառնում են արտաքին հարաբերությունների համար կարևորագույն ուղղությունները: Անգլիային հարկավոր էր գտնել իր նոր տեղը աշխարհում:

Չերչիլի կողմից հռչակված կուրսը համապատասխանում էր լեյբորիստների նպատակներին: Ամերիկյան ֆինանսական օգնությունը շատ էր անհրաժեշտ Անգլիային տնտեսական և ֆինանսկաան ճգնաժամից դուրս գալու համար: Բացի այդ լեյբորիստները հանգիստ էին ընդունում այն հանգամանքը, որ Մեծ Բրիտանիան գնալով դառնալու է Վաշինգտոնի «փոքր խաղընկերը»: Ի տարբերություն պահպանողականների, նրանք ընդունում էին «Բրիտանիայի մեծությունը» որպես արդեն պատմության փակ էջ: Արդեն 1946թ. էթլիի կառավարությունը սկզբունքորեն անցնում է ատլանտյան համերաշխության քաղաքականությանը և ԱՄՆ-ի նախագահ Թրումենի հետ միասին դառնում է «սառը պատերազմի» նախաձեռնողը: Չնայած ֆինանսական ճգնաժամին՝ Անգլիան մեծ ուշադրություն էր դարձնում սպառազինության հարցին: Արդեն 1946թ. որոշում ընդունվեց բրիտանական ատոմային ռումբի արտադրության մասին: 50-ական թթ. սկզբին ռազմական ծախսերը կազմեցին ազգային եկամուտի 10-11% (30-ական թթ. կեսերին այն կազմում էր ընդամենը 2,5 %): 1949թ. ԱՄՆ-ի և Անգլիայի նախաձեռնությամբ ստեղծվեց ՆԱՏՕ-ն: Գերմանիան բաժանվեց երկու պետությունների՝ արևմտյան մասում, որտեղ գտնվում էին Անգլիայի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի օկուպացիոն գոտիները 1949թ. սեպտեմբերին ստեղծվեց Գերմանական Դեդերատիվ Հանրապետությունը (ԳԴՀ), իսկ արևելյան մասում, որտեղ գտնվում էին խորհրդային զորքերը, 1949թ. հոկտեմբերին՝ Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունը (ԳԴՀ): Բեռլինը նույնպես բաժանվեց արևմտյան և արևելյան մասերի: Սկսվում է Բրիտանական գաղութային կայսրության փլուզման գործընթացը: 1946թ գարնանը լեյբորիստական կառավարությունը ստիպված եղավ Հնդկաստանին տրամադրել դոմինիոնի կարգավիճակ: 1947թ. օգոստոսի 15-ին Հնդկաստանը կրոնական հատկանիշի հիման վրա բաժանվեց երկու պետությունների՝ Հնդկաստանի և Պակիստանի, որոնք մտան Ազգերի Բրիտանական համագոր-

ծակցության կազմի մեջ: Հնդկաստանի անկախությունը բրիտանական համագործակցության զարգացման մեջ նոր փուլի սկիզբ է դնում:

«Բրիտանիայի հպատակ» հասկացողության տեղը գալիս է նորը՝ «Համագործակցության քաղաքացի»: 1947թ. սկսած «դոմինիոն» տերմինը փոխարինվում է «Համագործակցության անդամ» տերմինով («դոմինիոն» տերմինը վերացավ 1952թ.): 1948թ. անկախություն ստացան Ցեյլոնը և Բիրման, վերջինը, սակայն, դուրս մնաց Համագործակցությունից: 1949թ. անկախություն է ստանում Իռլանդական Հանրապետությունը: Նույն թվականին անկախություն ձեռք բերեց Անդրհորդանանը: Անգլիան մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում Պաղեստինի նկատմամբ, որի վրա նա մանդատ ուներ: Մինչև 2-րդ համաշխարհային պատերազմը Անգլիան իր վրա պատասխանատվություն էր վերցրել հրեա գաղթականներին «պատմական հայրենիքում» վերաբնակեցման համար: Սակայն Պաղեստինի անգլիական վարչության փորձը՝ հսկել հրեա գաղթականների հոսքը, ոչ մի արդյունքի չբերեց: Արաբական բնակչությունը թշնամաբար էր ընդունում հրեաներին: Անգլիական կառավարությունը, ելնելով ստեղծված վիճակից, առաջարկեց բաժանել Պաղեստինը երկու անկախ պետությունների: Սակայն այդ հարցի շուրջը լեյբորիստական կուսակցության մեջ կային լուրջ տարաձայնություններ: Տեսնելով, որ այլևս արաբ-իսրաելական հակամարտության դեմ ուժերը չի բավարարում, անգլիական կառավարությունը 1947թ. փետրվարի 14-ին հայտարարեց, որ հանում է իր միջնորդի դերը և փոխանցում ՄԱԿ-ին: Ստեղծված դրությունից օգտվում են հրեաները: 1948թ. մայիսի 14-ին հրեաների առաջնորդ՝ Դավիդ Բեն-Գուրիոնը հռչակեց Իսրայելական Հանրապետության ստեղծման մասին: Դա Անգլիայի և լեյբորիստական կառավարության արտաքին քաղաքականության նոր անհաջողությունն էր: Լեյբորիստական կառավարությունը մասնակցեց նաև կորեական պատերազմին՝ ՄԱԿ-ի դրոշի ներքո՝ (686 սպանված և 2498 վիրավոր): Այդ պատերազմին մասնակցելը լեյբորիստական կուսակցությանը դրական համբավ չբերեց և զարմանալի չի որ շուտով՝1951թ.սեպտեմբերին լեյբորիստական կառավարությունը ստիպված է լինում հրաժարական տալ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Матвеев В.А. Британия вчера и сегодня. М., 1989
2. Сванадзе Л.Н. Великобритания: консерваторы и проблемы послевоенного развития 1945-1955. М., 1987
3. Трухановский В.Г. Уинстон Черчиль. М., 1989
4. Трухановский В.Г. Антони Иден. Страницы английской дипломатии 30-50-е годы. М., 1976